ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1988 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍՏԻՊՈՒՄ ԵՆ ՀԵՌԱՆԱԼ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ

ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը առանձնահատուկ մտահոգությամբ են նշում, որ Ադրբեջանական ՍՍՀ-ում և Հայկական ՍՍՀ-ում ստեղծվել է աննախադեպ իրադրություն, երբ տեղական կուսակցական, սովետական ու տնտեսական մարմինների առանձին պաշտոնատար անձանց թողտվությամբ, իսկ հաճախ նաև ուղղակի մասնակցությամբ, էքստրեմիստական տրամադրություններ ունեցող խմբերը կատարում են այնպիսի գործողություններ, որոնք հանգեցնում են բնակության մշտական վայրերից քաղաքացիների արտաքսմանը և մեկնումը ազգության պատճառով: Դրա հետևանքով երկու հանրապետություններից էլ տասնյակ հազարավոր մարդիկ մնում են առանց օթևանի, աշխատանքի և գոյամիջոցների: Դրանով իսկ խախտվում են սովետական մարդկանց սահմանադրական իրավունքները, նրանց հասցվում է բարոյական և նյութական վնաս: Այս ամենը խորացնում է հանրապետություններում տիրող բարդ իրադրությունը: Տեղական իրավապահ մարմինները շատ դեպքերում պատշաճ միջոցներ չեն ձեռնարկում կարգուկանոն հաստատելու համար, հակահարված չեն հասցնում էքստրեմիստական տարրերի գործողություններին:

Քաղաքացիների շահերը պաշտպանելու, տեղական կուսակցական, սովետական ու տնտեսական մարմինների պաշտոնատար անձանց հակաօրինական գործողությունները կասեցնելու նպատակով ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Դատապարտել, որպես ՍՍՀՄ-ի քաղաքացիների սահմանադրական իրավունքների կոպիտ խախտում, Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի տեղական, կուսակցական, սովետական և տնտեսական մարմինների առանձին պաշտոնատար անձանց գործողությունները, որոնք թույլ են տալիս և խրախուսում մշտական բնակության վայրերից մարդկանց արտաքսումն ու մեկնումը ազգության պատճառով:

2. Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմներից, Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ մինիստրների խորհուրդներից, այդ հանրապետությունների իրավապահ մարմիններից պահանջել անհետաձգելի և վճռական միջոցներ ձեռնարկել կատեցնելու հիշյալ հակաօրինական գործողությունները: Քաղաքական խիստ գնահատական տալ յուրաքանչյուր այդպիսի փաստի: Անհամատեղելի համարել կամայականություն և ապօրինություն թույլ տվող անձանց մնալ կուսակցության մեջ, պետական ապարատում և կառավարական մարմիններում:

3. Ադրբեջանական ՍՍՀ-ի և Հայկական ՍՍՀ-ի կուսակցական ու սովետական մարմիններին՝ անհրաժեշտ ամեն ինչ անել բնակության մշտական վայրերից հեռացած բնակչությանը աջակցություն և օգնություն ցույց տալու համար: Լայնորեն ծավալել քաղաքական և կազմակերպական պրակտիկ աշխատանքը, որպեսզի մարդիկ կարողանան վերադառնալ իրենց տունուտեղը և աշխատանքային նորմալ գործունեությանը:

Կառավարական հանձնաժողովին, ըստ ամենայնի աջակցել այս սուր և անհետաձգելի պրոբլեմի լուծմանը:

ՍՄԿԿ Կենտրոնական
կոմիտեի քարտուղար՝
Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

ՍՍՀՄ Մինիստրների
խորհրդի նախագահ՝
Ն. ՌԻԺԿՈՎ